ռայելու իւր ազգին, որից այնքան տարի անջատուած էր, և ոչ ռուսաց պետութեան երկու արքունիքներում իրեն չռայլած շնորհները, ոչ այդ արքունիքներում իրեն ընծայուած պատուաւոր դիրքը, ոչ էլ պետութեան մատուցած իւր ծառայութիւնների գնահատուելն և ճանաչուելը կարող եղան փարատել նրա մտքից այդ փափագը։ Ընայելով Մայր Աթոռի ընկճուած դրութեան, դրա բարոյական նշանակութիւնն այնքան մեծ էր, որ Յովսէփ արքեպիսկոպոսը սիրով պատրաստ էր փոխանակել հիւսիսային մայրաքաղաքի հեշտանքն ու պատիւները Պարսկաստանում սպասող զրկանքների ու վտանգների հետ... Դեռ Սիմէոն կաթողիկոսի օրով Յովսէփ սրբազանը ցանկութիւն էր յայտնած Զմիւռնիա կամ Պոլիս առաքուելու, որոնց հայ ժողովուրդը մեծ ազդեցութիւն ունէին կաթողիկոսների ընտրութեան վրայ, սակայն այդ դիտաւորութիւնն ի դերև ելաւ. Ղուկասի ընտրութիւնն էլ Սիմէոնի մահից յետոյ, ինչպէս տեսանք, այնպէս արագ կատարուեցաւ, որ Յովսէփը ժամանակ անգամ չգտաւ յօգուտ իւր թեկնածութեան որ և է բան անելու։ Նա պարտուպատշաճ խոնարհութեամբ հնազանդուեցաւ ազգի նորընտիր հայրապետին, բայց և բնականաբար՝ իւր էական արժանիքների համեմատ՝ իրեն էր համարում ոչ միայն նրա օրինաւոր, այլ և արժանաւոր յաջորդը։ Արդեօք նորան յուզում էր այն միտքը թէ իւր բազմամեայ ծառայութիւնն եկեղեցուն և ազգին ռուսաց պետութեան մէջ ըստ արժանւոյն կգնահատեն Ռուսաց սահմաններից դուրս եղած հայերը, որոնցից և գլխաւորապէս կախուած էր։ Այս բոլորն ի նկատ առնելով նա որոշեց մի նամակ գրել Ղուկաս կաթողիկոսին։ Ինչքան որ կարելի է դատել Ղուկասի պատասխանից այդ գրին՝ Յովսէփ յայտնած պիտի լինէր, թէ կարևոր է համարում Էջմիածին գալ իւր թեմի մի քանի գործերի մասին հայրապետի հետ անձամբ խորհրդակցելու համար առանց յիշելու, թէ կըմնայ արդեօք Էջմիածնում, թէ կըվերադառնայ Ռուսաստան,—և խնդրած, որ իւր բացակայութեան ժամանակ թեմի գործերի վարչութիւնը Եփրեմին կամ Դանիէլին յանձնուի։

Ի պատասխանի այդ գրութեան Նորին Սրբութիւնը 1782 թ. իմաց տուաւ Յովսէփին, թէ անյարմար է դատում անորոշ պաշտօնով Ռուսաստան ուղարկել այդ վարդապետներից մէկին կամ միւսին, այլ թէ կրցանկար Եփրեմին եպիսկոպոս ձեռնադրել և Ռուսաստանի թեմական առաջնորդ կարգել, որպէս

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան